19

ՀԵ 107, Մաթ. 28:7

1. Հարուցյալ է Տերն այսօր, ալելուիա՛,
Նա հաղթող է և հզոր, ալելուիա՛,
Իր մահվամբ հիանալի, ալելուիա՛,
Մեզ կեցուց միշտ կենդանի, ալելուիա՛:

2. Երգերով մեր քաղցրալուր, ալելուիա՛,
Արդ գովենք Տերն երկնավոր, ալելուիա՛,
Ինք կրեց դառն վիշտ ու ցավ, ալելուիա՛,
Որ ապրինք՝ մեր տեղ մեռավ, ալելուիա՛:

3. Իր կրած այն դառն տագնապ, ալելուիա՛,
Մեր սիրույն հավետ է կապ, ալելուիա՛,
Որ սրտեն հերկինս հասնի, ալելուիա՛,
Ուր Հիսուս իսպառ հանգչի, ալելուիա՛:

4. Հարուցյալ է Տերը մեր, ալելուիա՛,
Ընելով դժոխս ավեր, ալելուիա՛,
Պիտ իշխե դարեր անվերջ, ալելուիա՛,
Բնակի մեր սրտից մեջ, ալելուիա՛:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025